ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11. 1955 Общественные науки

Ա. Ադամյան

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1853—1856 ԹՎ.ԱԿԱՆՆԵՐԻ ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի Արխիվային բաժնում մեզ հայտնի դարձան 1853—1856 թվականների Ղրիմի պատերազմի վերաբերյալ մի քանի վավերագրեր, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում հիշյալ պատերազմի և հայ-ռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունների մասին։ Ինչպես հայտնի է, Ղրիմի պատերազմի ժամանակ մեծ ճակատամարտեր են տեղի ունեցել Սև ծովի բանալի՝ Սևաստոպոլ քաղաքի համար։ Այդ մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում 1855 թվականին գրված մի վավերագիր (միևնույն էջում գրված է և՛ ռուսերեն և՛ հայերեն), ուր հաղորդում է, որ ցամաքային և ծովային ուժերի գլխավոր հրամանատար կնյազ Գորչակովը գրել է, որ 1855 թվականի հունիսի 6-ին ֆրանսիական և անգլիական զորքերի կողմից Սևաստոպոլի վրա կազմակերպված մեծ դրոհը ջախջախվել է ռուսական բանակի կողմից։ Վավերագրի հեղինակը հանգամանորեն նկարագրում է այդ դրոհի մանրամասնությունը։

Մեջ ենք բերում հիշյալ վավերագրի հայերեն օրինակը, որը թարգմանել են այն նպատակով, որ ռուսական բանակի թշնամու դեմ տարած հաղթանակը հայկական եկեղեցիների միջոցով իրազեկ դարձնեն հայ ժողովրդին։

«Յայսմ ժամու ստացեալ են ի գլխավոր կառավարչէ չոր և ծովային զօրութեանց ի Ղրիմի ղեներալ ադեութանդէ կնիազ Ղօրչակովէ դհետեւեալ տեղեկութիւնս վասն մերժելոյ ի 6-ն յունիսի զվճռողական յարձակումն (շտուրմ) թշնամոյ ի Սևաստոպոլէ։

Ի 5-ն յունիսի երեք և կէս ժամու, զկնի կէս գիշերոյ թշնամին արձակեաց զդժոխային հուր յամրատեղիս նաւական կողմանց, ներգործելով յընթացս երկուց ժամուց յամենայն բաթարէից, համարեա թէ անդադար արձակմամբ։

Երկրորդ ժամ զկնի կէս աւուր նա եբաց նմանապէս զզօրաւոր հուր թնդանօթից և ընդդէմ ամրատեղւոյ մերոյ աջ կարգի, հուրն եղև հասարակեալ և տևեաց մինչև ցվերջին երեկոյ։ Ամրատեղիք մեր իւրեանց կողմանէ պատասխանեցին յոյժ սաստիկ հրով։

Ի հասանելն մթնալորդի, թշնամին արձակեաց դմեծ գնդակս (բոմբայ) և զֆիշակ ի քաղաքն, նաւահանգիստն և հիւսիսային կողմն։ Զգիշերն զողջոյն զօրաւոր հուրն ոչ հատաւ թշնամեաց նաւն, բաժանեալ ի գծէ իւրոց նաւուց, արձակեաց զհուր ի նաւահանգիստն և ի քաղաքն, բայց մեծ մասն նորա հրազործեաց անկաւ ի փորր լիճն։ Ոչ հայեցեալ յայս ահարկու հուր, զործողութիւնք մեր ըստ ուղղութեան ՊՏասուց ամրոցի յառաջարկէին զարգացմամբ։

Ի լուսանալն 6-ն յունիսի ի մէջ սաստիկ խափանողական հրոյ, թշնամին մեծաւ զօրութեամբ շարժեաց յարձակումն (շտուրմ) ի վերայ ամրատեղաց նաւական կողմանց։ Բազմաժողով զօրք ամրաքակելովք զկնի գնդաւ ի մի վայր արձակեցաւ նա յամրատեղսն № 1, պաշտպանողական կազարմայն յամրատեղիս № 2, կարնելովի և № 3 և ի բլուրն յաջակողմեան ամրատեղւոյ ունելով ի մտի ուրև իցէ թափանցանել ի մեծ տարածութեան[1] պաշտպանական մերոյ գծի։

Ունելով ընդ իւր դսանդուխդս, և զայլ զործսի հարկաւորեալս (ֆաշին և շանց) թշնամին արագապէս շարժեցաւ յարձակումն և ոչ հայեցեալ ի զօրութիւն հրոյ, հրացանի և կիսագնդակաց, առաջին մասունք զօրաց նորա հասին ի խորխորատ ամրատեղեաց և ելանեն ի ծայր նոցին։

Զզողացաւ զիծ ահարկու պաշտպանողաց Սևաստոպոլի։ Կուրծքով և շտիկով հանդիպեալ ընկալան նոքա դհամարձակ թշնամին զոր և արկանէին ի խորխորատս։ Միայն խումբ զօրաց թշնամոյ հարեալ ի մի ամրատեղի, մերձ Մալախովի բլրակի, գերազանց

[1] *Բնագրում գրված է տարածանութեան։*

զօրութեամբ հեռացուցեալ զեղեալն անդ բաթալեօն, բայց արթուն կառավարիչ ամենայն գծի ամրատեղեաց նաւական կողմանց զեներալ լեյթենանտ Խրուլևն, զիտեալ զի թշնամին էանց մերձ ի մեր գիծ, աճապարեաց անդ, առանելով զյիշեալն բաթալիօնն և մերձ եղեալ անդ զասն ոօթ շտկով (սիւնկի) և արտաքսեաց զթշնամին յամրաւեղուջէ հալածելով զնա և յետուսա ընթանալով մինչ ի տեղի նոցա, ուր չղազարէին ևս ի խոցելոյ զփախըստական Ֆրանցուզսն յամենայն միւս կողմանց զօրք մարտեալք օրինաւոր արիութեամբ հերքեցին զյուսահատ յարձակումն թշնամոյ քաջալերեալք ի քաջ իւրոց զորապետաց կօնդր զեկավարէ Պանֆիլովէ և զեներալ մայորէ կնիազէ Ուռուսովայ։

Ի ձեռս մեր, բաց ի մեռելոց ի խոցուածոց, մնացին ի զերութեան, Ֆրանցուզք շտապ օֆիցեր 1, աֆիցերներ 16, ստորին ծառայողք 270 և Անգղիացի շտապ օֆիցեր 1, սալդաթներ 2 և նմանապէս առեալ են զբազում սանդուխգս և դայլ ամրոցական գործիս։

Ամրատեղիք մեր ի հիւսիսային կողմանէ և նաւք յոյժ բազում օգնեցին առ ի մերժելոյ զյարձակումն թշնամոյ, առանձին ևս նաւն Վլադիմիր, որ յարձակ էր կիսագնդակըսն յամրափակեալ զօրս, որք էին ի թագստեան ընդ ծածկոցաւ»[1]։

Անհրաժեշտ է նշել, որ ֆրանսիական և անգլիական հիշյալ դրոհները զիմադրելու և եա մղելու գործում մեծ դեր են խաղացել ռուս հանճարեղ ծովակալ Նախիմովը և մեծատուղանդ ինժեներ Տոտլեբեն, որոնք նախօրոք հմտորեն նախապատրաստել էին հակառակորդի դրոհները կործանման ենթարկելու պլանները։

Ղրիմի պատերազմի ժամանակ դաշնակից զորքերը Սև ծովի ափին գտնված քաղաքների և գյուղերի վրա կատարած իրենց հարձակումներով ավերում էին քաղաքները և գյուղերը, ոչնչացնում էին խաղաղ բնակչությանը։

Այդ առթիվ ուշագրավ է 1885 թվականի մայիսի 27-ին Նոր Նախիջևանից կաթողիկոսին ուղղված Գաբրիել քահանա Պատկանյանի նամակը, ուր նա գրում է, որ 1855 թվականի մայիսի 21-ին անգլիական և ֆրանսիական նավատորմը մտել է Ազովի ծովը և կերչի նեղուցը ու խարիսխ դցել Տպանրոգ քաղաքի դիմաց, ապա մայիսի 22-ին սկսել է ռմբակոծել քաղաքը։ Քաղաքին օգնության է գալիս ռուսական զորքը և հալածում դաշնակից զորքերի նավերին։ Նամակի շարունակության մեջ Ք. Պատկանյանը գրում է նաև, որ թշնամու զորքերի արշավանքի երկյուղից (խոսքը անգլիական, ֆրանսիական և թյուրքական զորքերին է վերաբերում) Նոր Նախիջևանցիները թողել են քաղաքը և փախել շրջակա գյուղերը։ Այդ մասին նա գրում է.

«...Բայց ոչ ինչ նուազ քան զտուն իմ զտի զքաղաքն բոլոր ի տրտմութեան և ի ծուփս, զի ասպատակք անգղիացւոց և դաղղիացւոց, որք միջամուխ լեալ էին ընդ նեղուցն կերճի ի ծովն Ազովայ, ի 21 մայիսի խարիսխ արկեալ հանդեպ թագանրոգայ ի 22 յաւուր կիւրակէի սկսեալ են ռմբակոծել զքաղաքն, որով բարձեալ են զզեղ ոմանց ի ծովևզերեոյ շինութեանց նորա։ Բայց ի հասանել զօրաց մերոց՝ հալածեալ են յաղղուութենէ ռմբագործեացն մերոց, և դարձեալ ի նեղուցն, ուր առի թէ զօրացեալ է կողմն մեր, նուաճեալ բռնութիւն հինին։ Ցերկիւղէ արշաւանաց այսոցիկ ծովայոյզ ելուագկաց ստսանեալ քաջագոտի Նախիջևանցաց թողեալ են զքաղաքս և փախուցեալ ի շրջակայս. ընդ որս և ոմանք ի քահանայից մերոց՝ նման վարձկանաց ի դալ դալոյն խուսեալ ի հոտէն։ Այսու պատճառաւ դադարեալ են տուր և առք ի շուկայս և ի փողոցս, և ոչ մի կրպակ գտանի բաց...»[2]։

Ղրիմի պատերազմի ընթացքում, Ռուսաստանում եղած ժողովուրդները, ի թիվս դրանց նաև հայ ժողովուրդը, ամեն կերպ օգնում էին ռուսական բանակին թշնամու դեմ հաղթանակ տանելու համար։

Ղրիմի պատերազմի ժամանակ ողջ Ռուսաստանում կամավոր հանգանակություն կազմակերպվեց Սևաստոպոլի ճակատամարտերում կռվող և այդ կռիվներում ընկածների ընտանիքներին օգնելու համար։ Այդ տեսակետից արժեքավոր են 1855—1856 թվականներին կաթողիկոսին ուղղած մի քանի վավերագրերը, որոնցից պարզվում է, որ Հայաստանում և Հայաստանից դուրս գտնված հայերը անկեղծ եղբայրական օգնության ձեռք են մեկնել Սևաստոպոլի ճակատամարտերում ընկած ռուս զինվոր-

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոս. դիվան, թղթ. № 176, վավ. № 91։

[2] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկ. դիվան, թղթ. № 176, վավ. № 83։

ների ընտանիքներին օգնելու, որոնք իրենց կյանքի գնով փրկել են ռուս քաջ զինվորի և հայրենիքի պատիվը։

1855 թ. կաթողիկոսին գրած մի վավերագրում հաղորդվում է, որ Թալինի շրջանի ութը հայ գյուղերի բնակիչներից Սևաստոպոլի մարտերում ընկած զինվորների ընտանիքներին օգնելու համար հավաքել են 104 ռուբլի։ Ուշագրավ է այդ վավերագիրը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ.

«Ցուցակ կամաւոր նուիրանաց թէ հոգևորականաց և թէ աշխարհականաց հայ ազգային Թալինու կողմանց զիւղօրէից յօգուտ զօրացն Սևաստոպոլու։

ՏԱՇՂԱԼԱՅ

Համայն բնակիչք Տաշղալուայ ընդ ծխական Գրիգոր քահանայի իւրանց, նուիրեցին ընդ ձեռն Գրիգորի Բարսեղեան, Բուլու Գրիգորեան և երիցփոխ Ղազարու Մխոյան տասն երկու մանէթ։ 12

ԱԴԻԵԱՄԱՆ

Նոյնպէս բնակիչք Ադիեամանայ նուիրեցին ընդ ձեռն Մանուկ Ադէկեանի, Սհոյ Յարութիւնեանի և Գրիգոր Միքաէլեանի, տասն և հինգ մանէթ։ 15

ՄԱԶԱՐՋՈՒՂ

Համայն հասարակութեանքն Մազարջուղայ ընդ ծխատէր Յարութիւն քահանայի իւրանց նուիրեցին ընդ ձեռն տանուտէր Գէորգայ, Աւդալեան, Գէորգայ Պօղոսեան և Բողոյի Բաւէեան չորս մանէթ . . . . . *

ՄԱՍՏԱՐԱ

Համայն բնակիչք Մաստարու, նուիրեցին ընդ ձեռն Սիմէօն Ղազարեանի, Յարութիւն Աղայի, Գրիգորի Տէր Մարդարեան և Սիմէօնի Մարտիրոսեան տասն և ութ մանէթ։ 18

ԴԱԴԱԼՈՒ

Նոյնպէս բնակիչք Դադալուայ նուիրեցին ընդ ձեռն տանուտէր Միրզոյ Գևորգեան, Խինկոյ Օվէեանի և Ռափայէլ Յունանեանի տասն յոթ մանէթ։ 17

ՂՐՄԶԼՈՒ

Նոյնպէս բնակիչք Ղրմզլուայ նուիրեցին ընդ ձեռն տանուտէր Կիրակոս Օհանէսեանի, Կարապետ Գրիգորեանի, Օվաս Պապօեանի և Գրիգոր Ասրալեանի տասն չորս մանէթ։ 14

ԳՍՕԶԼՈՒ

Համայն բնակիչք Գեօզլուայ նուիրեցին ընդ ձեռն տանուտէր Վարդանայ Ալոեան Սարոյի, Մանոեան և Ներսէսի Պետրոսեան ինն մանէթ։ 9

ԹԱԼԻՆ

Նոյնպէս բնակիչք Թալինու նուիրեցին ընդ ձեռն Ավդալայ Պետրոսեան, Յարութիւն Յակոբեան, Վարդանայ Յարութիւնեան, Մովսէսի Առաքելեան և Յարութիւն Մարտիրոսեան տասն և հինգ մանէթ։ 15

Ընդամենը՝ 104

Բարեկարգ Գրիգոր քահանայ տիրացու Յակոբեան»[1]։
1855 թ.

Ստորև բերված ռուսերեն վավերագրում հաղորդում են, որ հիշյալ նպատակի համար Գորիի հայերից հավաքել են 470 ռուբլի, Մոսկվայի հայերից՝ 176 ռուբլի, 23¾ կոպեկ։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկ. գիվան, թղթ. № 176, վավ. № 325։

СПИСОК

лицам, сделавшим пожертвование в пользу морских чинов и семейств их, потерявших имущество в Севастополе

№	Кем сделано пожертвование	Сумму серебром руб.	коп.	Когда и при чем присланы деньги в комиссариатском департаменте морского министерства
1	Духовными и светскими лицами Горийской постыв.	470	—	При рапорте Грузино-Имеретинской Епархальной Армяно-Грегорианской консистории 24-го февраля № 216
2	Проживающими в городе Москве лицами армяно-грегорианского исповедания	176	23¾	При отношении Московского Армяно-Грегорианского духовного правления 24 февраля № 13
	Итого:	646	23¾	

Директор подпись[1].

1856 թվականի մայիսի 3-ին Ալեքսանդրոպոլից Ն. Աշտարակեցուն ուղղած գրության մեջ հայտնում են, որ Սևաստոպոլի մարտերում ընկածների ընտանիքների օգտին Շիրակի գավառից հավաքել են 1080 ռուբլի, 47 կոպեկ, իսկ Փամբակի գավառից 3432 ռուբլի 80 կոպեկ և ուղարկել են Երևանի կոնսիստորիա։ «Հոգևոր կառավարությունն հայոց Ալեքսանդրապոլու համաձայն կոնդակի վեհափառության Ձերում գրեցելոյ յանուն իւր յ3 սեպտեմբերի 1855 ամի համար 227 զժողովարարության կամաւոր նուիրատուության յօգուտ ընտանեաց ծովային զօրաց Սևաստապոլու յանձնարար ի քաղաքին Ալեքսանդրապոլու բարեկարգի այնորիկ ի միասին ընդ միումս ի մէջ մահտեսի Ռափայելի Յոհանջանեանց, և ի գաւառիկսն Շիրակայ և Փամբակու անդամոյ յիշեալ կառավարության Յակով քահանայի, տալով նոցա վասն գրելոյ գստորագրությունս նվիրատուության զժապաւենեալ մատեանս, որպեսի յանձնարարությունն ածեալ ի կատար, մատուցին առաջինքն մի հազար ութսունութն մանէթ, քառասուն եօթն կոպէկս, և երկրորդն երեր հազար չորս հարիւր եռեսուն երկու մանէթ և ութսուն կոպէկ, որք ըստ դատողության մեր և յիշեալ կառավարության ընդ յայտարարության այնորիկ ի 4 մայիսի համար 138 ընդ ձեռն նոյն անդամոյ կառավարության Յակոբ քահանայի և որդւոյ բարեկարգի Գաբրիէլ քահանայի ի պատճառս ծերության հօրն, մատուցան կոնսիստորիայի Երևանայ...»[2]։

1856 թվականի ապրիլի 29-ի № 105, հուլիսի 6-ի № 142 և սեպտեմբերի 30-ի № 184 կաթողիկոսին ուղղած պաշտոնական գրություններում զեներալ ադմիրալ Կոստանդինը հայտնում է, որ հայերի կողմից Սևաստոպոլի ընկածների օգտին հավաքած 646 ռուբլի 23¾ կոպ, 318 ռուբլի, 74 կոպեկ և 4549 ռուբլի 31 կոպեկը ստացել են և այդ առթիվ հայտնում են շնորհակալություն[3]։

1856 թվականի դեկտեմբերի 19-ին կաթողիկոսին ուղղած մի գրությունում Ստավրոպոլի և Արմավիրի հայ հասարակությունը հայտնում են, որ Սևաստոպոլի ճակատամարտերում ընկածների ընտանիքների համար հավաքած 53 ռուբլի 40 կոպեկը ուղարկել են ռազմական մինիստրությանը։ «Կոնսիստորեայս ի լրումն յայտարարության իւրոյ ի 31 հոկտեմբերի այսր ամի № 1221 պատի։ ունի ամենախոնարհաբար ծանուցանելոյ Ձերում վեհափառության թէ ստացեալ ըստ յայտարարության կարգապահի Ստաւրապոլայ Դաւթի

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկ. դիվան, թղթ. № 183, վավ. №. 460։

[2] Նույն տեղում, թղթ. № 181, վավ. № 165։

[3] Նույն տեղում, թղթ. № 183, վավ. № 460։ 1, 2, 3։ Տեղի սղության պատճառով մեջ չենք բերում վավերագրերը։

Ջաւղարեանց ի 19 հոկտեմբերի՝ այսր ամի № 87 զկամաւոր նուէրս Ստաւրապոլայ և Արմաւիր աւանը յօգուտ ծովային զօրաց Սեւաստապոլու բոլորն դումարաւ յիսուն և երեք ռուբլի քառասուն կոպէկ հանեալ զծախս փոստային յիսուն և երեք կոպէկ զմնացեալ յիսուն և երկու ռուբլի ութսուն և եօթը կոպէկ արծաթայ առաքեաց ի կոմիսարիատսկի դեպարտամենտն ծովային նախարարութեան յայսմ աւուր № 1414»[1]։

1856 թ. դեկտեմբերի 29-ին կաթողիկոսին ուղղած մի ուրիշ վավերագրում Նորնախիջևանի և Բեսարաբիայի հայ հասարակութիւնը գրում է, թե Սեւաստոպոլի կոիվներին ընկածների օգտին հավաքած դումարը ուղարկել են ծովային նախարարության։

«Ի սմին Ատենի լուան զգեկուցումն ըստ զործոյն յաղագս ժողովելոյ զկամաւոր նուիրանս յօգուտ ծովային զօրաց Սեւաստապոլու, զորմ է սոյն Ատեանս ի հետևումն հրամանի Ձերոյին գերածայրեալ օծութեան յ3-էն սեպտեմբերի 1855 ամի ենթ. համարու 225 ըստ զօրութեան օրագրութեան իւրում կայացուցելոյն ի 28 յիշեալ ամսոյ եզրակացուցեալ առաքեաց ընդհանուր հրամանագրութեամբք յամենայն տեղիս սմին հաւատացեալս զառանձին զառանձին ժապաւինեալ մատեանս առ ի հրաւիրեալ զժողովրդականս և զհոգևորականս լուսավորչադաւան հայազգեաց ի կամաւոր նուիրանս յօգուտ վերոհիշեալ ծովային զօրաց Սեւաստապոլու, որոց և պատուիրեաց զի յետ հաւաքելոյն զայնպիսի դրամս առաջի արասցէն սմին առ ի հասուցանել ըստ պատկանելումն ևս տեղեկութիւնս ի գործոց սոյն վիճակային ատենիս յորոց երևի ի քաղաքացն, Օդեսսայ, Դրիդորոպոլու, Քիշնևայ, Ախքերմանայ, Օրհէյի և Հօթենու և Նոր Նախիջևանայ և ի Տաւրիկեան նահանգէ ի քաղաքացն Ապիտոչնայի և Օրբաղարի հասուցեալ էին յայս Ատեանս զվերտոդեալ նուիրանս ի դումարն չորս հարիւր յիսուն և վեց մանէթ և ինն կոպեկ, զորս Կոնսիստորիայս ընդ ձեռն գրութեան իւրոյ ի 23-էն յունիսի սոյն ամի համար 411 հասոյց առ Սանկդպետերբուրգայ ծովային նախարարութիւնն և հրամանագրեաց Հոգևոր կառավարութեան Ղարասու բաղարի և քահանայիցն Ֆէօդոսիոյ և հին Ղրիմու և գործակալին Սիմֆէրապոլու զի և նոքին փութացուսցեն առ Կոնսիստորս զհաւաքեցեալ նուիրանս։ Ի հետևումն որոց քահանայքն հին Ղրիմու և Ֆէօդոսիոյ առաջի արարին, առաջինն ընդ յայտարարութեան ի 13-էն յուլիսի համարաւ, 25 գրառասուն և չորս մանէթ և յիսուն կոպեկ. և երկրորդն ի 12-էն սեպտեմբերի համարաւ 10, տասն և ութ մանէթ և յիսուն մի կոպեկ արծաթի. հաւաքեալսն ի հին Ղրիմ և Ֆէօդոսիայ և հոգևոր կառավարութիւն Ղարասու բաղարի ընդ յայտարարութեան ի 10 հոկտեմբերի համարաւ 230, քսան և վեց մանէթ քսան ութ կոպ.։ որոց դումարն առնէ ութսուն ինն մանէթ և քսան ինն կոպէկ։ Կարդաւորեցին ի վերոյիշեալ ութսունինն մանէթաց և քսան ինն կոպեկաց ի բաց հանել նախապէս զպատկանեալ մաքս փոշտայի դութսուն ութ կոպէկ արծաթի զմնացեալն անդի դութսուն ութ մանէթ և քառասուն մէկ կոպէկ արծաթին ընդ ձեռն առանձին գրութեան առաքել առ Սանկդպետերբուրգայ ծովային նախարարութեան կոմիսարիատսկի դեպարտամենտն և խնդրել խոնարհաբար անդի զի զկնի ստանալոյ վերտոդեալ դրամացն. հաղորդեսցէ սմին ի տեղեկութիւն յարակցելով թէ յետ ստանալոյ և ի Սիմֆերապոլէ զնոյնպիսի նուիրանս ոչ զանց արասցէ Ատեանս առաջի առնել նոյն դեպարտամենտին զպատճէնս ժապաւենեալ մատենիցն նուիրանաց այլ զվերառաց դրամս յաղագս նախապէս գրելոյ ի հաշուեմատեանս օտարապատկան դրամոց ի թիւս ծախուց սահմանեցեալ կարգաւ տալ զհրամանագիր տէր Սահփաննոս քահանայի Ամասեանց գանձապետի ատենիս, և զայսպիսի կարգադրութիւնէ Ատենիս ընդ ձեռն սոյն յայտարարութեան ամենախոնարհարար ծանուցանել Ձերոյն Գերածայրեալ օծութեամբ ի պարտու պատշաճ տեղեկութիւն»[2]։

Ուշադրավ է 1862 թ. հոկտեմբերի 24-ի էջմիածնի Սինոդի որոշումը, որից պարզվում է, որ 1860 թվականի հոկտեմբերի 10-ի մի գրությամբ Սինոդի կողմից Երևանի կոնսիստորիա է ուղարկվել 237 հատ բրոնզե խաչ, 237 հատ մեդալ, 340 արշին, 11 վերշոկ Վլադիմիրսկի և 43 արշին, 13 վերշոկ Անդրեսկի լենտեր 1853—1856 թվականների Ղրիմի և Կովկասի պատերազմին մասնակցած հայ քահանաներին պարգևատրելու համար։ Այդ մասին Սինոդը գրում է.

«Ի 24 հոկտեմբերի 1862 ամի՝ ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս սրբոյ էջմիածնի լուան զյայտարարութիւն վիճակային Կոնսիստորիային Հայոց

---

1 Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 181, վավ. № 391։

2 Նույն տեղում, թղթ. № 182, վավ. № 405։

Երևանայ ի 18 օգոստոսի տարւոյս համարաւ 1218 յորում գրէ թէ կառավարչական մասն Սինոդի սրբոյ Էջմիածնի ի 10 հոկտեմբերի 1860 ամի համարաւ 1874 առաքեալ ի կոնսիստորիայն զ237 բրօնզեայ լանջական խաչս և զ237 հատ մեդալս, շնորհեալս հոգևորականաց Հայոց թէմին Երևանայ ի յիշատակ պատերազմի 1853—1856 ամս հանդերձ 340 արշին 11 վերշօկ Վլադիմիրսկի և 43 արշին 13 վերշօկ Անդրեասկի լէնթիւք, ի միասին ընդ անուանական ցուցակի նոցա, պատուիրեաց համաձայն նոյն ցուցակի բաժանել զայնս ի վերայ հոգևորականաց ենթադրելոց նորուն տեսութեան, այնու միայն զի ոք յայնց մեռեալիցէ պատկանեալ նոցա խաչք և մեդալք վերադարձուցին ի սինոդս, որովհետև յիշատակեալ մեդալք և խաչք էին հոգևորականաց դտանեցելոց ի գաւառս Երևանայ, Նոր Բայազէտու և Էջմիածնայ ևս և Երևան քաղաքի, վասն որոյ կոնսիստորիայն համաձայն օրագրութեան իւրոյ կայացելոյ ի 19 հոկտեմբերի 1860 ամի եղրակացոյց, յանձնել նոցա զայն անդ...»[1]։

Հիշյալ վավերագրից պետք է եզրակացնել, որ զորակոչի ենթարկված մեծ թվով հայ զինվորներ են մասնակցել 1853—1856 թվականների պատերազմին։ Նրանց սպասարկման համար մի քանի հարյուր քահանաներ են մեկնել, ինչպես Ղրիմի, այնպես էլ Կովկասի ռազմաճակատները։

1853—1856 թվականների պատերազմի ծանր փորձությունների տարիներին, այնպես էլ պատերազմից հետո, հայ ժողովուրդը միշտ եղել է ռուս մեծ ժողովրդի հետ և ամեն կերպ օգնել նրան Ռուսաստանի վրա հարձակվող թշնամիներին ջախջախելու համար։

---

1 Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Սինոդի օրագրություններ, թղթ. № 57, վավ. № 155։